1. Բաժանորդը, միանալով «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթի բաժանորդ և.
   - Ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին երկու ամիսների ընթացքում Ծառայությունները ստանում է 2 դրամով,
   - Ստանում է Wi-Fi սարքի (այսուհետ՝ Սարք) 1 դրամով [1] օգտագործման իրավունք (բաժանորդը կարող է հրաժարվել վերոնշյալ արտոնությունից):
2. «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթին հնարավոր է բաժանորդագրվել՝ միանալով Օպերատորի ծառայություններին վերջինիս գործընկեր կազմակերպության վաճառքի սրահում (գործընկեր են համարվում բոլոր այն կազմակերպությունները, որոնք Օպերատորի հետ կնքել են «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթի վաճառքի հետ կապված գործակալական պայմանագիր):
3. Wi-Fi սարքի 1 դրամով օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթի պայմաններով սահմանված (1 տարի) ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi սարքն անհրաժեշտ է Բաժանորդին ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման դեպքում Wi-Fi սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
4. Եթե Բաժանորդը «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթին բաժանորդագրվելիս իր ցանկությամբ չի օգտվում Wi-Fi սարքի 1 դրամով օգտագործման իրավունքից, ապա «Ռինտերնետ տարեկան+» պայմանագրի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:

   Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Ռինտերնետ տարեկան+ սակագնային փաթեթի պարտադիր գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամակահատվածի տևողությամբ: «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթից ծառայության ակտիվացման օրվանից սկսած առնվազն տասներկու ամիսների (365 օրերի) ընթացքում:
5. Եթե Բաժանորդը դադարեցնում է «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթին բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը Օպերատորին ամբողջապես վճարում է ընթացիկ պարտքը և տուգանք 20000 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) չափով:

[1] Wi-Fi սարքի՝ 1 դրամով օգտվելու իրավունքը գործում է միայն «Ռինտերնետ տարեկան+ 7500» և «Ռինտերնետ տարեկան+ 10000» սակագների Բաժանորդների համար:

6. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:
7. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: